

Կոտայքի մարզ Պոռշյան համայնք Գ.Չաուշի փողոցի
հարևանությամբ նախատեսվող առևտրի կենտրոն

Պատվիրատու
<<Նորիկ 70>> ՍՊԸ



<<Էկո Գրուպ ԱՄ>> ՍՊԸ
Տնօրեն՝ Ա.Մինասյան

Երևան 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	3
1.2	Հապավումներ	3
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը.....	4
1.4	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	5
1.4.1	Նախատեսվող գործունեության նկարագիր.....	5
1.4.2	Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը.....	7
1.4.3	Նախատեսվող աշխատանքների կազմակերպում.....	16
1.4.4	Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ	16
1.4.5	Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ.....	17
1.4.6	Կադրային ապահովում և շինտեխնիկա	19
1.4.7	Նյութերի և բնառեսուրսների օգտագործում.....	20
2.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ		24
2.1	ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	24
2.2	ԿԼԻՄԱՆ	25
2.3	Օդային ավազան	29
2.4	Ջրային ռեսուրսներ.....	30
2.5	Հողերի նկարագիրը	31
2.6	Հողային ռեսուրսներ.....	32
2.7	Կենսաբազմազանություն	33
2.8	Թափոնների կառավարում.....	37
3	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	38
3.1	ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	38
3.2	ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....	39
3.3	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	39
3.3.1	ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ.....	39
3.3.2	ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ	40
3.3.3	ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ.....	40
3.3.4	ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	41
3.3.5	ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ	43
4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ.....		43
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ		45
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ		48
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ		45
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ		46

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

- 1.2 Ձեռնարկող՝ << Լորիկ 70 >> ՍՊԸ
- 1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ Ք.Երևան Բաշինջաղյան փողոց 99 տուն
- 1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ Ք.Երևան Բաշինջաղյան փողոց 99 տուն
- 1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ Կոտայքի մարզ, Պոռշյան համայնք

1.2 Հապավումներ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Առևտրի կենտրոնի նախագիծը նախատեսվում է իրականացնել Կոտայքի մարզ, Պոռշյան համայնք Գ.Չաուշի խճուղի թիվ 1/47 և 1/48 հասցեներում:

Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից առևտրի և ժամանցի կենտրոն:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Առևտրի կենտրոնի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Բազմաֆունկցիոնալ առևտրի կենտրոնի նախագծման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը և Պռոշյան համայնքապետարանի կողմից տրված թիվ 08, թիվ 09 նախագծման թույլտվությունները:

Նախագծվող առևտրի կենտրոնը գտնվում է Երևան-Աշտարակ մայրուղու աջակողմյան հատվածում, Պռոշյան համայնքի Գ. Չաուշի խճուղի 1/47 և 1/48 հողամաս հասցեներում:

Շինությունը բաղկացած է երկու մասերից, որից մեկը՝ առաջնայինը, երկհարկանի է, մասնակի երրորդ հարկով, իսկ մյուսը՝ ետնամասինը, երկհարկանի է: Շինության համար նկուղային հարկ նախատեսված չէ, ուստի բոլոր պահեստային տարածքները զետեղված են առաջին հարկում: Ավտոկայանատեղին բացօթյա է:

Նախագծվող շինությունը ունի 145,2մx109,2մ հիմնական զաբարիտային չափեր, առաջնային շինությունում առաջին և երկրորդ հարկերում 5.1մ, երրորդ հարկում 3.8մ հարկի բարձրություն, ետնամասի շինությունում առաջին հարկի բարձրությունը 5.1մ է, երկրորդ հարկում մասնակի 3.8մ և 6.5մ է: Շինությունը միաձույլ ե/բետոնե և մետաղական ստրուկտուրային կոնստրուկցիաների հիմնակմախքից է: Կաթսայատունը, ինչպես նաև բոլոր հիմնական ինժեներական սարքավորումները նախատեսված են երրորդ հարկում:

Բացօթյա ավտոկայանատեղին նախատեսված է 170 մեքենայի համար, զբաղեցնում է ասֆալտապատ 4486,0 քմ տարածք:

Հարկերի միջև հաղորդակցությունները իրականացված են աստիճանավանդակների, վերելակների և շարժասանդուղքների միջոցով:

Շինության արտաքին լուծումները նախատեսված են իրականացնել ժամանակակից բորձրորակ նյութերով և դեկորատիվ էլեմենտներով, օգտագործելով ինչպես քարե և փայտե երեսվածք, այնպես էլ մետաղական և ապակյա էլեմենտներ:

Ջեռուցում: Շենքի ջերմամատակարարման աղբյուր են հանդիսանում երկրորդ հարկում գտնվող կաթսայատունը՝ 85-65°C ջերմակրի ջերմաստիճանային ռեժիմով: Ելնելով ջերմային ծախսերից նախագծում կաթսայատան համար նախատեսված

են Wolf ընկերության MGK-2 1000 մակնիշի ավտոմատացված կոնդենսացիոն ջրային երկու և MGK-2 800 մեկ կաթսաներ (3 աշխատող), համապատասխանաբար 931 կՎտ (800660 կկալ/ժ) և 700 կՎտ (602000 կկալ/ժ) հզորությամբ: Կաթսաները համալրված են ավտոմատացված գազայրիչներով, որոնք աշխատում են ցածր ճնշման բնական գազով:

Առևտրի կենտրոնի նախագիծը մշակվել է հաշվի առնելով Հ.Հ, գործող բոլոր քաղաքաշինական և հակահրդեհային նորմերը, նախատեսված են էվակուացիոն ելքեր դեպի դուրս, ինչպես նաև միջոցառումներ հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժի համար:

Հողի ընդհանուր մակերես՝ 2.1031 հա և 1.673 հա;

Նոր կառուցվող մասնաշենքերի /առևտրի կենտրոն/

զբաղեցրած տարածք ներառյալ աստիճան և թեքուղի – 16450քմ- 43.6%;

Կանաչապատման մակերես՝ 12060 քմ- 31.9 %;

Կառուցապատման մակերես՝ 9251 քմ- 24.5 %:

- Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի,
- գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման համար:
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

1.4.2 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

Իրականացված աշխատանքների հիման վրա տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակերը՝

Շերտ-1 Խճային գրունտ բազալտի պար: Գրունտը պինդ է, լցոնը՝ շագանակագույն և պինդ թանձրության: Դրանք ժամանակակից դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՈՒՍ IV-5-82-ի (396) IV կարգ է:

Շերտ-2 Բազալտ դացիտային, ամուր, մոխրագույն, բեկորային անջատումներով: Նեոգեն ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգի հրաբխային հոսքեր: Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն ՇՈՒՍ IV- 5-82-ի (19) IX կարգ է:


Երկրաֆիզիկական հետազոտությունների եզրահանգումներ

- Սեյսմիկ զոնդավորման արդյունքները ցույց են տալիս, որ հետազոտված տարածքի համար սպասվող առավելագույն հորիզոնական արագացումները գտնվում են 325 - 368 սմ/վրկ² տիրույթում:
- Միկրոսեյսմերով գրանցված տվյալներով ստացված արդյունքներից երևում է, որ տարածքի գրունտերի տատանումների գերակայող պարբերությունները գտնվում են 0,301- 0,366 վրկ. տիրույթում:
- Միկրոսեյսմերով գրանցված տվյալներով ստացված արդյունքներից երևում է, որ տարածքի գրունտները, համաձայն ՀՀՇՆ 20.04-04 «ԵՐԿՐԱՇԱՐԺԱԴԻՄԱՑԿՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ» նորմատիվային փաստաթղթի աղյուսակ 3 -ի, համապատասխանում են սեյսմիկ առաջին կարգի գրունտերին:

ԴԻՏԱՐԿՎՈՎՈՂ ՏԱՐԱԾԲ




ՀՊՈՎԱՄՍԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾ
Մտքի կողմից, համայնքի թողարկ. Գ Չարսյի խմբակի 148 հողամաս



ՀԱՄԱՁԱՅՆՆԵՑՎԱԾ Է
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ Ա ՄՈՒՐԱԴՅԱՆ

Տնօրեն	Ա. Տանդյան	<i>[Signature]</i>	ԱՌԵՎՏԻԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԻԾ Մտքի կողմից, համայնքի թողարկ. Գ Չարսյի խմբակի 148 հողամաս	«ԱՄՆԱՐԿ» ԱԳՈ
Ն.Գ.Ճ.	Ա. Տանդյան	<i>[Signature]</i>		լից. 1289 1
Ն.Գ.Ի.	Ա. Մխիթարյան	<i>[Signature]</i>	Ճարտարապետություն	Գրատվեր 75
Նախագծող	Ա. Տանդյան	<i>[Signature]</i>	ՏԵՐԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ Մ 1:4000, ԳՆԱԿՎՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ Մ 1:2000	Թերթ Թերթեր
				5 17




ԾԱՆՈԹՅՈՒԹՅՈՒՆ

1. Հողամասի ընդհանուր մակերեսը Մարզ Կոտայք, համայնք Նախիջուղ Գ Չարչի խմբի 1/47 հողամաս՝ ըստ սեփականության վկայականի 2,1031 հա
2. Հողամասի ընդհանուր մակերեսը Մարզ Կոտայք, համայնք Թոշյան, Գ Չարչի խմբի 1/48 հողամաս՝ ըստ սեփականության վկայականի 1,673 հա
3. Նոր կառուցվող մասնաշենքերի/ամառային կենտրոն/ զբաղեցրած տարածք մեծարյալ աստիճան և թեքուղի 16450 մ²
4. Կանաչապատ տարածք 12060 մ²
5. Անֆալտապատ տարածք 9251 մ²


ՀԱՄԱՁԱՅՆՆԵՑՎԱԾ Է
 ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

Տնօրեն	Ա. Տարնյան	<i>[Signature]</i>	ԱՌԵՎՏԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԻԾ / ՔՆԿ Բ/ Մարզ Կոտայք, համայնք Նախիջուղ Թոշյան, Գ Չարչի խմբի 1/47 հողամաս Մարզ Կոտայք, համայնք Թոշյան, Գ Չարչի խմբի 1/48 հողամաս	«ԱՆԱՐԿ» ՍՊԸ լից. 12801	
Ն.Գ.Հ.	Ա. Տարնյան	<i>[Signature]</i>		Հարտադրամասն թիվ	Դասակարգ 75
Նախագիծ	Ա. Տարնյան	<i>[Signature]</i>	ՏԵՂԱՆՔԻ ԶԱՆՈՒՅԹ Մ 1:4000 ԳՆԱՀԱՎՈՐ ԳՆԱՀԱՏՎՈՅ ԿՄ 1:2000	Ձեռք	Ցույն
				4	13






Կոտայքի մարզ
Պոռոշյան համայնք
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 07-053-0387-0006
Մասշտաբ 1: 2000



սպասարկման գրասենյակ

	Կորդինատներ	
	X	Y
1	8452522.0583	4455710.3410
2	8452547.1940	4455738.7423
3	8452536.4397	4455747.7063
4	8452611.4449	4455859.5796
5	8452710.5668	4455772.0257
6	8452612.9938	4455640.4747



Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետև հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 36,0 ամիս կամ 3 օրացուցային տարի շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

N	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎ ԱՆՈՒՄ	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ (3 ՏԱՐԻ 36 ԱՄԻս)																																				
		15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	
1	Շինարարական նախագիտմանը եւ բարձր գործընկերություններ																																					
2	Հողաբանական աշխատանքներ																																					
3	Գոյնի քանակի եւ որակի ստուգում																																					
4	Երկրաբան քարակազմի շտաբի գործունեություններ																																					
5	Ներքին գրանցումների հրավերները եւ ցուցանիշներ																																					
6	Արձանի արժեքների գործունեություն																																					
7	ԵՊ արժեքների գործունեություն																																					
8	ԵՊ հարցումների գործունեություն																																					
9	Երկրաբան շտաբի եւ ժամկետի գործունեություններ																																					
10	Երկրաբան ստորաբաժանների հրավերներ																																					
11	Գրանցումների եւ սեզոնների շտաբի եւ եՊ արժեքների գործունեություն																																					
12	Տվյալների գործունեություն եւ եՊ գործունեություններ																																					
13	Ստորաբաժանի զննումների գործունեություն																																					
14	Հասցեների հրավերներ																																					
15	Դրամների եւ ֆուտուրների տրամադրում																																					
16	Ինժեներական ծախսերի հրավերներ																																					
17	Ներքին գործունեություն անասնաբան																																					
18	Արձանի գործունեություն անասնաբան																																					
19	Երկրաբանի քանակագրություն																																					

Տնօրեն	Ա. Զանդյան	<i>[Ստորագրում]</i>	ՊԱՐԵՏԱՑՑԻՆ ԱՄՆԱՇԵՆԵԻ ՆԱԽԱԳԻԾ Մարզ Կողմը, համայն Դեղան, Գ Չարպ. խնդիր 1/47 հղամաս Մարզ Կողմը, համայն Դեղան, Գ Չարպ. խնդիր 1/48 հղամաս	«ԱՆԱՐՉ» ՍՊԸ լից. 12801	
Ն.Գ.Ճ.	Ա. Զանդյան	<i>[Ստորագրում]</i>		Պատվեր 75/1	
Ն.Գ.Ի.	Ա. Մխչյան	<i>[Ստորագրում]</i>	ՀՊՆ. ԿԱՑԱԿԵՐՊԱՆ ՆԱԽԱԳԻԾ		
Նախագծից	Ա. Զանդյան	<i>[Ստորագրում]</i>	ՀԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԱՅԻՆԱՑՄԱՆ ԳՐԱԽԿ		
			Թերթ Թերթեր ԸՆԼ-4 5		

1.4.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

1.4.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և

մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.4.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն համայնքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

Աշխատանքի կազմակերպում

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված :
2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:
3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան :
2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:
3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:
4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման« արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներ նիրականացնող կազմակերպությանը:

1.4.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 150 մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ - 5 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

Հիմնական մեքենաների և մեխանիզմների մոտավոր քանակություն

Մեքենաների և մեխանիզմների մոտավոր քանակը

Հ/Հ	Մեքենաների և մեխանիզմների անվանում	Մեքենաների մակնիշը և տիպը	Մեքենաների քանակը, հատ
1	2	3	4
1	Ավտոմեքենա	բեռնատվ. 7.5տ	3
2	Կողային սվառմեքենա	բեռնատվ. 5տ	2
3	Ավտոբեռնափառնիչ	տարողութ-յունը 6մ ³ KAMA3 54429	2
4	Ավտոբեռնասպառնիչ	ԱԵՇ-6ՃԱ	1
5	Կոմպրեսոր	արտադ-յունը 10մ ³ /րոպե	2
6	Ավտոմեքենա բեռնատվ. 32տ	KAMA3 53229-1040-15	1
7	Հետահար սնորհ	ՄՕ-10	2
8	Ձեռքի պնևմատիկ	40կգ	1
9	Էքսկավատոր	JSB - JS200W	1
10	Էքսկավատոր	Hyundai R290	1
11	Էքսկավատոր	CAT 428F	1
12	Խորքային վիբրատոր 4.5մ Φ51մմ	ГВ224551 220կվ	1
13	Խորքային վիբրատոր 2.0մ Φ35մմ	Zitrek Z-900 045-0049- 220կվ	2
14	Եռակցող սպարատ ձեռքի 10-220A	САН 220 (ММ)	3
15	Ձեռքի էլեկտրագործիքներ	-	10

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

1.4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է տարեկան մեկ մարդու հաշվարկով 70 կգ $150 \times 70 \times 3 / 1000 = 31.5$ տ և շինարարական աղբն է 1180 խմ ծավալով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հասկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 145 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1080 օր

$$W_{\text{խ.տ.}} = (5 \times 0.016 + 145 \times 0.025) \times 1080 = 3924 \text{ խմ/շին. ժամ.}:$$

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 1000 քմ,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 1080

$$U_1 = 1000 \times 0.0015 \times 1080 = 1620 \text{ խմ/շին. ժամ.}:$$


Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 5544 խմ/շին. ժամ:

Առևտրի կենտրոնի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին, որի համար սահմանված կարգով լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Ջրամատակարարումը կիրականացվի Գ.Չաուշի խճուղի նրբ 1/48 տարածքով անցնող d=400մմ և d=800մմ ջրատար խողովակները շրջանցելուց հետո՝ շրջանցվող ջրատարից: Առաջացող հոսքաջրերի մաքրումը կիրականացվի Евросос-6խմ/օր հզորությամբ կենսաբանական մաքրման կայանում:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Բիոզուգարանների սպասարկումը պայմանագրային հիմունքներով իրականացվում է մատակարար կազմակերպության կողմից:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի համար սահմանված կարգով կստացվի տեխնիկական պայման և լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Առևտրի կենտրոնում նախատեսվում է իրականացնել կենտրոնական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է տեղադրել տանիքում և շենքի ետնամասում քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:



2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՍԻՋԱԿԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հետազոտվող տարածքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ Պոռշյան համայնքի Գ.Չաուշի խճուղի 1/47, 1/48 հասցեներում: Հարևանությամբ 40-150 մ հեռավորության վրա գտնվում են այլ հասարակական, գյուղատնտեսական, բնակելի տներ: Տարածքում կազմակերպվել է շինարարական հրապարակ և իրականացվել են շինաշխատանքներ, մասնավորապես նախատեսվող կառույցի հիմքի հողային աշխատանքներն իրականացված են ամբողջ ծավալով: Նախատեսվող շինության հիմնականախարհ իրականացված է ամբողջ ծավալով:

Գեոմորֆոլոգիական տեսակետից Պոռշյան համայնքը գտնվում է Երևան-Աշտարակ ավտոմոբիլային ճանապարհի վրա: Մարզկենտրոն Հրազդան քաղաքից հեռու է 52 կմ, մայրաքաղաք Երևանից՝ 4 կմ: Ուսումնասիրվող տարածքին բնորոշվող ռելիեֆային հիմնական տարրերն են Կոտայքի հրաբխային սարահարթի Զովունու սարահարթն է: Ուսումնասիրվող տարածքը ներկայացնում է հրաբխային դելյուվիալ լանջի մի հատված:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Նախկինում տվյալ տեղամասում մինչև 60 մետր խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի հրաբխային սարահարթի սահմաններում դրանք գտնվում են 60 մետրից խորը հորիզոններում՝ բեռնաթափվելով Հրազդան գետի հովտում, իսկ ավելի խորը տեղակայված ջրերը սնում են Արարատյան հարթավայրի հորիզոնները:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ մեր ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի, տեղագնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}= 0.4g$ արագացմամբ, 9 ավելի բալլ սեյսմիկությամբ:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան: Ծառաթուփային բուսականությունը բացակայում է:

2.2 ԿԼԻՄԱՆ

Տարածքին բնորոշ է խիստ ցամաքային, չոր, շոգ ամառով, ձյունառատ, սակայն երկար աշնանային օրերով օժտված կլիման:

Կլիմայական պայմանները բերված են ըստ մոտակա՝ Աշտարակի կայանի տվյալների:

Ըստ այդ օդերևութաբանական կայանի տվյալների.

- օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը – 34 °C, իսկ առավելագույնը՝ +38 °C, օդի միջին տարեկան ջերմաստիճանը՝ +15 °C, տարվա ամենացուրտ ամսվա՝ հունվարի միջին ջերմաստիճանը՝ 18°C, տարվա ամենատաք ամսվա՝ օգոստոսի միջին ջերմաստիճանը՝ + 30 °C:

Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է 466 մմ: Ձյան ծածկույթի միջին հաստությունը հասնում է 15 սմ: Հողի սառցակալման առավելագույն խորությունը հասնում է 61 սմ: Քամիները հիմնականում հյուսիս - արևելյան են՝ 2.3 մ / վրկ արագությամբ:

Ստորև աղյուսակների ձևով ներկայացված տեղանքի բնակլիմայական ցուցանիշները ըստ Աշտարակի կայանի տվյալների:

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Բնութագրեր	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
միջին ամսական	-4.2	-1.3	4.4	11.3	16.2	20.8	24.7	25.0	20.2	13.6	6.6	-0.5	11.4
միջին առավելագույն	0.9	3.6	9.9	17.2	22.4	27.5	31.7	32.0	27.1	19.9	11.6	3.9	17.3
միջին նվազագույն	-7.2	-5.0	0.3	6.5	10.7	14.7	18.7	18.7	14.2	8.6	2.8	-3.4	6.7
բացարձակ առավելագույն	13	17	24	33	32	38	40	41	37	30	24	20	41
բացարձակ նվազագույն	-25	-22	-15	-9	1	5	7	10	3	-4	-12	-21	-25

Աղյուսակ 2.2. Օդի հարաբերական խոնավությունը

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
76	68	61	60	59	53	51	49	53	61	70	77	62

Աղյուսակ 2.3. Քամու ուղղության և անդորրի կրկնելիությունը (%)

Ամիս	Հս	Հս Արլ	Արլ	Հվ Արլ	Հվ	Հվ Արմ	Արմ	Հս Արմ
I	4	21	22	11	16	12	10	4
II	4	20	22	12	15	12	11	4
III	3	19	25	12	13	11	11	6
IV	4	18	23	12	15	13	11	4
V	4	21	22	12	15	12	10	4
VI	5	22	22	13	14	12	8	4
VII	4	26	23	11	12	11	9	4
VIII	4	27	20	11	13	12	10	3
IX	3	23	24	12	14	13	8	3
X	4	24	26	12	13	10	9	2
XI	4	25	24	11	13	12	8	3
XII	4	25	22	9	15	12	10	3
Տարի	4	22	23	11	14	12	10	4

Աղյուսակ 1.6 Արևափայլի տևողությունը

Բնակավայրի օդերևույթաբանական կայանի անվանումը	Տևողությունը ըստ ամիսների, ժամ												Տարեկան գումարային
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Աշտարակ	120	152	183	203	255	320	362	332	295	230	151	94	2697

2.3 Օդային ավազան

Պռոշյան համայնքի տեղանքի օդային ավազանի աղտոտվածությունը կարող է պայմանավորված լինել ինտենսիվ տրանսպորտային երթևեկությամբ Երևան – Աշտարակ մայրուղով:

Ձմեռային շրջանում որոշակի ազդեցություն կանող են ունենալ ջեռուցման սարքերի արտանետումները:

Օդի գոյություն ունեցող աղտոտվածությունը որոշվում է ըստ տարբեր աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների մակարդակի: ՀՀ տարածքում բնակավայրերի օդի աղտոտվածության վերահսկողությունը իրականացվում է “Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն” ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից: Սակայն մշտական դիտակայաններ տեղադրված են միայն Երևան, Վանաձոր, Արարատ և Հրազդան քաղաքներում, մյուս բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները որոշվում են ըստ մշակված աղյուսակի՝ էլնելով տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

Ստորև բերված են Պռոշյան համայնքի օդային ավազանի ֆոնային աղտոտվածության հաշվարկային ցուցանիշները և դրանց հեմամատությունը բնակավայրերի համար սահմանված միջին օրեկան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՄԹԿ) հետ: Հաշվի առնելով, որ համայնքում բնակչության թիվը չի գերազանցում 10 հազ., ցուցանիշները կլինեն.

N	Վնասակար նյութի անվանումը	Միջին օրեկան ՄԹԿ, մգ/մ ³	Ֆոնային աղտոտվածությունը, մգ/մ ³	Աղտոտվածությունը ՄԹԿ մասերով, %
1	Փոշի	0.3	0.2	66.7
2	Ծծմբի երկօքսիդ`	0.05	0.02	40.0
3	Ազոտի երկօքսիդ	0.04	0.008	20.0
4	Ածխածնի օքսիդ	3.0	0.4	13.3

2.4 Ջրային ռեսուրսներ

Պոռշյան համայնքի տարածաշրջանում հիմնական ջրային ռեսուրսն է Հրազդան գետը: Համայնքի մերձակայքում կա նաև ոռոգման ջրանցք:

ՀՀ կառավարության կողմից “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին” որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ “գերազանց” (1-ին դաս), “լավ” (2-րդ դաս), “միջակ” (3-րդ դաս), “անբավարար” (4-րդ դաս) և “վատ” (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության “Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն” (Էկոմոնիթորինգ) ՊՈԱԿ կողմից, որի տվյալները 2017 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Քասախ գետի Ապարան քաղաքից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև՝ «վատ» որակի է (5-րդ դաս): Աշտարակից վերև և ներքև հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «անբավարար» որակի (4-րդ դաս):

Հրազդան գետի Արզնի ՀԷԿ-ից ներքև, Դարբնիկ գյուղի մոտ և գետաբերանի հատվածներում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս):

2.5 Հողերի նկարագիրը

Ներկայացվող տարածքում հիմնականում ձևավորվել են հողագրունտի 3 խմբեր, որոնք ունեն հողագոյացման տարբեր ուղղություններ՝ խոնավ մարգագետնային ավազային, թերի զարգացած ավազակոպձային և սապրորելիտային տափաստանացված:

Տարածքի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են գրունտների հետևյալ տարատեսակները.

Կավային գրունտները (ավազակավ, կավ, կավավազ) ունեն լայն տարածում, առանձնապես տարածքի հարավ-արևելյան մասերում, այս գրունտներով ծածկված են բազալտային և տուֆային հոսքերը, ծածկոցները, հրաբխային սարավանդների սահմաններում, Հրազդան գետի ձորի լանջերի “հիմքային” մասերը: Այս գրունտների հզորությունը կախված է բազմաթիվ գործոններից և տատանվում է միավորից մինչև 10մ և ավելի: Ընդհանուր առմամբ այս գրունտները ոչ կայուն են: Այս գրունտներում առկա է կարբոնատային կեղևի շերտեր 0.5-ից մինչև 2.5 մետր, երբեմն ավելի հզորությամբ: Այս գրունտները աղայնացած են, դյուրահալ աղերի պարունակությունը կազմում է 0.1% մինչև 10%, միջին լուծելիության աղերի քանակը՝ 1.0-15%, դժվար լուծվող աղերի քանակը՝ 5-40%, ծակոտկենության գործակիցը կազմում է 0.4-1.12, ծավալային կշիռը 1.47-1.93 գ/սմ³, դրանք պլաստիկ թանձրության են, պլաստիկության թիվը հասնում է մինչև 10-ի: Հարաբերական “նստումը” տատանվում է 0.01-0.13սմ սահմաններում:

Մեծաբեկորային գրունտները ներկայացված են խճա-մանրախճային, մեծաբեկորա-խճային, ճալաքարա-կոպձային և գլաքարա-կոպձային տարատեսակներով: Քարակտորները ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային, նստվածքային ապարներով, հատիկաչափական տեսակետից դրանք շատ բազմազան են ու բազմապիսի, ավազային և կավային գրունտների ենթաշերտերով, ոսպնյակներով:

Խոշորաբեկորային նստվածքները՝ խճա-մանրախճային և ճալաքարա-կոպձային, բնութագրվում են հետևյալ ֆիզիկա-մեխանիկական հատկանիշներով. խտությունը՝ 1.55-1.72գ/սմ³, ծակոտկենությունը՝ 43-45.4%, ծակոտկենության գործակիցը՝ 0.75-0.83, ներքին շփման անկյունը՝ 24-26°, շաղկապվածությունը՝ 1-2 ԿՊա, ձևախախտման մոդուլը տատանվում է 32-40ՄՊա սահմաններում, կավային լցանյութի դեպքում: Մեծաբեկորա-խճային և գլաքարա-ճալաքարային գրունտների համար խտությունը կազմում է 1.9-2.0 գ/սմ³, լցանյութի համար ներքին շփման անկյունը կազմում է 25-27°, շաղկապվածությունը՝ 0.30ԿՊա:

Բազալտներ, անդեզիտա-բազալտներ՝ մուգ մոխրագույն, տեղ-տեղ վարդա-մոխրագույն գրունտներ, խարամացած, անհավասարաչափ, ծակոտկեն, տարբեր ամրության և ճեղքավորված, սյունաձև, սալիկային, մեծաբեկորային, գնդաձև և բրեկչիանման, մակերեսից (մինչև 3-5մ խորության) տարբեր աստիճանի հողմնահարված, հրաբխային խարամի և ավազի ենթաշերտերով: Դրանք մասնակցում

են Եղվարդի հրաբխային սարավանդի, Հրազդանի հովտում, շատ տեղամասերում ծածկված են դեյուվիալ, էյուվիալ և դեյուվիալ-էյուվիալ առաջացումներով, 5.0-10.0մ հզորությամբ: Բազալտները, անդեզիտա-բազալտները ներկայացված են խիտ, մանրածակոտկեն և խոշորածակոտկեն տարատեսակներով, որոնք համապատասխանաբար բնութագրվում են հետևյալ ֆիզիկա-մեխանիկական հատկանիշներով (միջինացված). ծակոտկենությունը (%)՝ 8, 16.1, 19.7, տեսակարար կշիռը (գ/սմ³)՝ 2.91, 2.88, 2.86, խտությունը (գ/սմ³)՝ 2.66, 2.42, 2.31, ջրակլանումը (%)՝ 1.24, 2.49, 2.85, միա-առանցք սեղմման դիմադրությունը (կգ/սմ²) չոր վիճակում՝ 1830, 1120, 601, ջրհագեցած վիճակում՝ 1320, 840, 482: Հրաբխային խարամներով զբաղեցրած տարածքը կազմում է մոտ 5-6 կմ², դրանք բեկորային են “փքված”, խայտաբղետ են՝ կարմրից մինչև սև, մոխրագույն և այլն: Դրանց խտությունը տատանվում է լայն սահմաններում՝ 0.9-1.7գ/սմ³, ծակոտկենությունը՝ միջինը 58%:

2.6 Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև գրունտային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 32000 խմ ընդհանուր ծավալով զանգվածի հանույթ: Հանվող 2400 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Պրոշյան համայնքի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

2.7 Կենսաբազմազանություն

Բուսական աշխարհ: Պոռոշյան համայնքի տարածքը գտնվում Երևանի ֆլորիստիկ շրջանում: Այստեղ հիմնականում ներկայացված է կիսանապատային բուսականությունը: Դրանց թվում՝

Օշինդրա-էֆեմերային, մասնակցությամբ՝ *Artemisa fragrans* Willd., *Kochia prostrata* (L.) Schrad., *Capparis spinosa* Willd., *Ceratoides papposa* Botsch.et Ikonn., *Atraphaxis spinosa* L., *Rhamnus pallasii* Fisch. et Mey., *Tanacetum argyrophyllum* (C. Koch) Tzvel., *Poa bulbosa* L. *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*, *Aeluropus littorails* (Gouan) parl:

Վայրի օգտակար բուսատեսակներից հանդիպում են Տուղտ դեղատու Տուղտ հայկական (*Athaea officinalis*, *A.armeniaca*) և Եզնարգել դաշտային (*Ononis arvensis*):

Բուն ուսումնասիրվող և հարակից տարածքներում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ չկան, քանի որ այդ տարածքները ենթարկված են անտրոպոգեն ազդեցության, բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են: Ուստի դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:

Համայնքի տարածքում կան բազմաթիվ կանաչ տարածքներ, այգիներ, տնամերձ հողամասեր: Մակայն ներկայացվող տարածքը գտնվում է յուրացված մասում և գործնականում զուրկ է բուսածածկից:

Կենդանական աշխարհ:

Տարածաշրջանում հանդիպում են՝

Ողնաշարավորներից՝ լճագորտ, ժայռային մողես, սովորական լորտու, տնային ճնճղուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակական դաշտամուկ, մոխրագույն առնետ, գայլ, աղվես, քարակզաքիս, աքիս:

Անողնաշարավորներից՝ անձրևաորդ, ծովախեցգետին, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճռիկ, մորեխ, փայտոջիլ, կապտաթիթեռ, կաղամբաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանճեր:

Ներկայացվող տարածքում նշվածից կարող են հանդիպել միայն որոշ անողնաշանավորներ:

Հարկ է նշել, որ բուն ուսումնասիրվող և հարակից տարածքներում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ չկան, ինչը բացատրվում է այդ տարածքի բնական էկոհամակարգերի խիստ փոփոխված, տեղանքը բավականին ուրբանիզացված լինելու հանգամանքով: Ուսումնասիրվող տարածքի անմիջապես դիմացով է անցնում Երևան-Աշտարակ միջպետական մայրուղին: Մարդկանց անընդհատ ներկայությունը ուսումնասիրվող տարածքում և նրա շրջակայքում, ինչպես

նաև մեքանաների ինտենսիվ շարժից առաջացած աղմուկի պատճառով ուսումնասիրվող տարածքում կենդանատեսակներ հանդիպելը գրեթե անհնար է: Կան, սակայն, մի շարք կենդանատեսակներ, որոնք բավականաչափ հանդուրժող են մարդկային միջամտության նկատմամբ, և մնում են տեղում (օրինակ՝ նապաստակը, ոզնին և այլն): Բացի այդ, որոշ տեսակներ կարող են բավականաչափ հարմարվողական կենսակերպ վարել նոր պայմանների նկատմամբ (օրինակ՝ աղվեսը, կամ որոշ թռչնատեսակներ):

Այսպիսով, ուսումնասիրվող տեղամասում բացակայում են ինչպես հազվագյուտ էկոհամակարգեր, այնպես էլ կենդանիների հազվագյուտ տեսակներ, որի հետ կապված դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հայաստանում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ 60-70%-ը, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

Ուսումնասիրվող տարածքը, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքում:

Համաձայն 14 օգոստոսի 2008 թվականի N 967-Ն «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշման Կոտայքի մարզում առկա է 33 բնության հուշարձաններ, որոնք բավականաչափ հեռու են գտնվում ուսումնասիրվող տարածքից:

	<u>ՀՀ Կոտայքի մարզ</u>	
«Անանուն» խզվածքներ	Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ	Երկրաբանական հուշարձան
Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ	Երկրաբանական հուշարձան
«Թագավորանիստ» խարամային կոն	Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում	Երկրաբանական հուշարձան
«Պեռլիտե փիղ» քարե քանդակ	Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ	Երկրաբանական հուշարձան
«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ	Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում	Երկրաբանական հուշարձան

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

«Ծակ քար» բնական թունել	Ջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին	Երկրաբանական հուշարձան
«Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ	Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում	Երկրաբանական հուշարձան
«Անանուն» քարայր սյունաձև բազալտներում	Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում	Երկրաբանական հուշարձան
«Անանուն» լանջային երոզիա	Ազատ գետի աջակողմյան ափերին	Երկրաբանական հուշարձան
«Անանուն» լավային ծալքեր	Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում	Երկրաբանական հուշարձան
«Անանուն» խորշեր	Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ.	Երկրաբանական հուշարձան
«Հատիս» հրաբուխ	Զովաշեն գյուղից 2.0 կմ արմ.	Երկրաբանական հուշարձան
«Ավազան» հրաբխային գմբեթ	Կարենիս գյուղից 1.5 կմ հս-արլ.	Երկրաբանական հուշարձան
«Կարենիս» հրաբխային գմբեթ	Կարենիս գյուղից 0.5 կմ հս-արլ.	Երկրաբանական հուշարձան
«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	Նուռնուս գյուղի և Արգելի ՀԷԿ-ի միջև	Երկրաբանական հուշարձան
«Անանուն» օբսիդիանի ելքեր	Զրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում	Երկրաբանական հուշարձան
«Անանուն» քարե կուտակումներ	Քաղսի գյուղի հվ-արմ. եզրին, Հրազդանի կիրճում	Երկրաբանական հուշարձան
«Գութանասար» հրաբուխ	Ֆանտան գյուղից 3 կմ հվ.	Երկրաբանական հուշարձան
«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեզխարա» գյուղատեղիի մոտ	Երկրաբանական հուշարձան
Ձորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա	գյուղ Ձորաղբյուր	Երկրաբանական հուշարձան
«Հաղպրտանք» աղբյուր	Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարեկյան) թաղամասի արլ. ծայրամասում, 1.5 կմ հս-արմ,	Զրաերկրաբանական

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

	ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա	հուշարձան
«Համով» աղբյուր	Ակունք գյուղի հվ-արմ. ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
«Քաղցր» աղբյուր	Արզնի գյուղից 150 մ հվ-արմ., Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
«Ձորի» աղբյուր	Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
«Ավազան» աղբյուր	Կաթնաղյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
«Սագերի» լիճ	Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս.	Ջրագրական հուշարձան
«Վիշապա» լիճ	Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ.	Ջրագրական հուշարձան
«Բազմալիճք» լիճ	Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս.	Ջրագրական հուշարձան
«Լուսնալիճ» լիճ	Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ.	Ջրագրական հուշարձան
«Ողջաբերդ» բնապատմական համալիր	Ողջաբերդ գյուղի հս-արլ. մասում	Բնապատմական հուշարձան
«Ռեիկտային կրկես Քյորոզլի լեռան մոտ»	Արտավազ գյուղի մոտ	Կենսաբանական հուշարձան
«Ալպյան գորգ»	Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպասարի գագաթային մասում, ծ.մ-ից 300 մ բարձրության վրա)	Կենսաբանական հուշարձան
«Թանթրվենի, Տիգրանի»	Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա	Կենսաբանական հուշարձան

2.8 Թափոնների կառավարում

Պրոշյան համայնքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 31.5 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 1180 խմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ գոյություն ունեցող շինությունների հիմքերի քանդման ընթացքում,
- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx):

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն կանաչապատման նախագծի: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 8365 քմ:

- Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 1200 խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Պոռշյան համայնքի հետ: Կանաչապատ տարածքների ռոռզումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ռոռզման ցանցից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից հետո 36 ամիս, նշված հարցը կհստակեցվի մոտ 3 տարի հետո:

3.3.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

• Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

• Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

• Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

• Նախատեսվող առևտրի կենտրոնում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների

• իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.5 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Ռեսորի կենտրոնի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1960000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	400000	400000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	36x35000	1260000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	12x25000	300000
Ամբողջ շինարարության համար		1960000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի: (d) Շինարարության ընթացքում համաձայն մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի, փոշեգոյացումը կանխելու նպատակով շենքերը կծածկվեն անթափանց թաղանթով
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:

	<p>Թափոնների կառավարում</p>	<p>(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p>
<p>Կեղտաջրերի հեռացում</p>	<p>Ջրի որակ</p>	<p>(a) Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեմներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոգուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով,;</p> <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:</p> <p>(c) Շինհրապարակից էլքի ժամանակ լվացվում են տեխնիկական միջոցների անվաղողերը: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:</p>
<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի հարակից բնակելի, հասարակական գյուղատնտեսական տարածքներ:

<p>Արտակարգ իրավիճակների կառավարում</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում</p>	<ul style="list-style-type: none"> - Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը; - Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: - Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: - Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:
---	--	---

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում - հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու

Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Սեփական տարածք	Արտաքին գնում	մշտական	Կապալառու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
2. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 21 հունվարի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՆՈՐԻԿ-70» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Պոռշյան Գ. Չաուշի խճուղի 1/48 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Առուվաճառքի պայմանագիր 24/12/2020թ. թիվ 4953, Համաձայնագիր 20/01/2021թ. թիվ 199

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-053-0387-0011

Մակերեսի չափը (հա)՝ 1.673

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Խառը կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 21012021-07-0096, գաղտնաբառ՝ 6AUBSJWNSZZW

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 22012021-07-0012, գաղտնաբառ՝ DI9BL545IB5V

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 22 հունվարի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՆՈՐԻԿ-70» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Պողոջան Գ. Չաուշի խճուղի 1/47 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Առուվաճառքի պայմանագիր 20.01.2021թ. գ/մ 201

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-053-0387-0006

Մակերեսի չափը (հա)՝ 2.1031

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արդյունաբերական օբյեկտների Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 22012021-07-0012, գաղտնաբառ՝ DI9BL545IB5V

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱՐՄԵՆ ԻԱԼԱԹՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 21012021-07-0096, գաղտնաբառ՝ 6AUBSJWNSZZW

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով





«Հաստատում են»
Արտադրատեխնիկական բաժնի պետ՝
Ա. Մարտիրոսյան
02.03 2021թ.

Տեխնիկական պայման ՎՁ 717 /2021

(Ջրամիացման և/կամ/ ջրահեռացման, շրջանցման նախագծման)

մ. Կոտայք, Կ. Պողոսյան, Գ. Չաուշի խճուղի նրբ 1/48 հող.
/Տարածքի հասցե/

«Նորիկ-70» ՍՊԸ
/Բաժանորդի անուն, ազգանուն/

044484848
/Հեռախոսահամար/



247124

Համակարգ	Ջրամատակարարում	Ջրահեռացում	Հեղեղատար	Հիդրանտի տեղադրման
Կոմունիկացիայի գտնվելու վայրը	1. Գ. Չառուշի խճուղի նրբ 1/48 հող. տարածքով անցող d=400մմ 2. Գ. Չառուշի խճուղի նրբ 1/48 հող. տարածքով անցող d=800մմ			
Գործող խողովակի տրամագիծը, ճնշումը, տեսակը	1. d=400մմ, P=0.1մթն. պող. 2. d=800մմ, P=2.0մթն. պող.			
Միացման կետի տեղը	2. Գ. Չառուշի խճուղի նրբ 1/48 հող. տարածքով անցող ջրատարը շրջանցվուց հետո շրջանցվող ջրատարից			
Միացման տրամագիծը	Համաձայն նախագծի			
Ջրաչափի տրամագիծը, դասը և տիպը				
Այլ պահանջներ	Ջրաչափական հանգույցների համար կառուցել դիտահորեր	Կոյուղու համակարգը բացակայում է, առաջարկվում է կառուցել հերմետիկ հոր	Համաձայն ՀՀԸՆ 40-01.01-2014թ. 307 կետի	Հիդրանտի տեղադրման կետում կառուցել դիտահոր
Ջրամատակարարման գրաֆիկ	Շուրջօրյա			



Կառուցման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է տվյալ ոլորտում լիցենզավորված կազմակերպությանը պատվիրել նախագծամախահաշվային փաստաթղթերի կազմում և դրանք համաձայնեցնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ :

Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը, դիմողի հայեցողությամբ, իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն կամ ընկերության պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ դիմողի հաշվին : Կառուցված նոր համակարգի միացումը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ դիմողի հաշվին :

Սույն տեխնիկական պայմանը ուժի մեջ է 1՝ (մեկ) տարի՝ գրանցման օրվանից սկսած, այն ենթակա է երկարացման՝ մինչև տեխնիկական պայմանի ժամկետի ավարտը՝ դիմողի կողմից ներկայացրած դիմումի հիման վրա :

Կառուցման ընթացքում, հողային աշխատանքներն իրականացնելիս, անհրաժեշտ է ձեռք բերել տվյալ համայնքի ղեկավարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ անձանց բույլությունները և/ կամ համաձայնությունները :

Անձրևաջրերի արտաքին կոյուղու բացակայության դեպքում անձրևաջրերի հեռացման ներքին ցանցի թողարկների ջրերը պետք է հեռացվեն շենքի մոտ նախատեսվող առկակներով (բաց թողարկ), ընդ որում, պետք է նախատեսել շենքի մոտ հողի մակերևույթի ողողումը բացառող միջոցառումներ :

«Մաշտոց» տեղամասի պետ՝  Կանինելյան
 Ինժեներական խմբի պատասխանատու՝  Վարդանյան

